Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 300 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԱՐՍԵՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ժամանակավոր տնակում ապրող Արսեն Մերուժանի Բարսեղյանի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա):
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզ, Մասիս համայնք, Ղուկասավան բնակավայր, 18-րդ փողոց 38 տնակ, բնակարանաշինության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	18,600,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արսեն Մերուժանի Բարսեղյան, Արարատի մարզ, Ղուկասավան, 18-րդ փողոց, 38 տնակ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի ապրիլի 20-ից մինչև նոյեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Բնակելի տան կառուցման նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում՝ 400,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 30-ը: 2. Բնակելի տան հավաքովի երկաթյա կառուցվածքների ձեռքբերում և ներմուծում՝ 6,800,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 30-ը:

		3. Շինարարական նյութերի և գործիքների ձեռքբերում, շինարարական աշխատանքների իրականացում՝ 11,400,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Բնակելի տան կառուցման նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում՝ 400,000 դրամ (հարկային արտոնություններ չեն ակնկալվում). 2. Բնակելի տան հավաքովի երկաթյա կառուցվածքների ձեռքբերում և ներմուծում՝ 6,800,000 դրամ. 3. Շինարարական նյութերի և գործիքների ձեռքբերում և ներմուծում՝ 7,500,000 դրամ. 4. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամ (հարկային արտոնություններ չեն ակնկալվում):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Արարատի մարզ, Մասիսի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկո-ղության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

05.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ